

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌՆՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26 մարտի 2012 թվական

գ. Կառնուտ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2012 թվականի վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի» և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 17 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի համայնքի ղեկավար Արծրունի Գաբոյանի Կառնուտի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի մարտի 1-ից մինչև 2013 թվականի մարտի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի մարտի 5-ին և ավարտվել՝ 2013 թվականի մարտի 19 -ին:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանին 2012 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 6-Ն որոշմամբ ընդունել է իր կանոնակարգը:

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2009 թվականի հունվարի 20-ի թիվ 3-Ն որոշմամբ (արձ. թիվ 1) հաստատել է համայնքի 2009-2012 թթ. զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 15 ծրագրային աշխատանքներից կատարվել են 14-ը: Այժմ ընթացքի մեջ է գյուղապետարանի և մշակույթի տան գույքի ձեռքբերման աշխատանքները:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 21.12.2010թ. թիվ 28-Ն, (արձ թիվ 8), 09.12. 2011թ.

թիվ 18-Ն, (արձ. թիվ 8), 24.12.2012թ. թիվ 13-Ն, (արձ. թիվ 5) որոշումներով հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները:

Համայնքի ավագանին 25.01.2011թ. թիվ 1-Ն (արձ. թիվ 1), 26.01.2012թ. թիվ 1-Ն, (արձ. թիվ 1) և 31.01.2013թ. թիվ 1-Ն (արձ. թիվ 1) որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Իսկ համայնքի ավագանու 04.02. 2010թ. թիվ 3-Ն (արձ. թիվ 1), 23.02.2010թ. թիվ 6-Ն (արձ. թիվ 2), 24.03.2010թ. թիվ 11-Ն (արձ. թիվ 3), 07.07.2010թ. թիվ 14-Ն (արձ. թիվ 4), 25.10.2010թ. թիվ 19-Ն (արձ. թիվ 5), 14.12. 2010թ. թիվ 22-Ն (արձ. թիվ 7), 25.01.2011թ. թիվ 2-Ն (արձ. թիվ 1), 06.05. 2011թ. թիվ 5-Ն (արձ. թիվ 2), 19.07. 2011թ. թիվ 9-Ն (արձ. թիվ 4), 30.11. 2011թ. թիվ 13-Ն (արձ. թիվ 7), 26.01.2012թ. թիվ 2-Ն (արձ. թիվ 1), 06.04. 2012թ. թիվ 5-Ն (արձ. թիվ 2) 28.11. 2012թ. թիվ 12-Ն (արձ. թիվ 4) 31.01. 2013թ. թիվ 2-Ն (արձ. թիվ 1) որոշումներով հաստատվել են համայնքի ղեկավարի առաջարկությունները՝ համայնքի 2010, 2011, 2012 և 2013 թվականների բյուջեներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան, համայնքի բյուջեի կատարման նկատմամբ համայնքի ավագանու կողմից վերակսկողություն իրականացնելու շրջանակներում, համայնքի ավագանին քննարկել է համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 05.04.2010թ. թիվ 10, արձ. թիվ 2, 07.07.2010թ. թիվ 13, արձ. թիվ 4, 25.10.2010թ. թիվ 18, արձ. թիվ 6, 06.04.2011թ. թիվ 3, արձ. թիվ 2, 19.07.2011թ. թիվ 11, արձ. թիվ 5, 06.04.2012թ. թիվ 3, արձ. թիվ 2):

Համայնքի ղեկավարը խախտել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ավագանուն եռամսյակը մեկ կամ հաղորդում չի ներկայացրել, կամ ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ (25.10.2010թ. թիվ 18, արձ. թիվ 6, 19.07.2011թ. թիվ 11, արձ. թիվ 5):

Ստուգված ժամանակաշրջանում համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

5) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ հարցերը ներկայացրել է ավագանու քննարկմանը (ավագանու որոշումներ՝ 23.02.2010թ. թիվ 7, արձ. 2, 24.03.2010թ. թիվ 8, արձ. 3, 27.09.2010թ. թիվ 17, արձ. 5, 25.10.2010թ. թիվ 18, արձ. 6, 14.12.2010թ. թիվ 26, արձ. թիվ 7, 26.05.2011թ. թիվ 4, արձ. թիվ 2, 19.07.2010թ. թիվ 10, արձ. թիվ 4, 30.11.2011թ. թիվ 12, արձ. թիվ 6, 06.04.2012թ. թիվ 4, արձ. թիվ 2, 29.05.2012թ. թիվ 6, արձ. 3):

6) Համայնքի ավագանու 2010 թվականի փետրվարի 4-ի թիվ 4-Ն որոշմամբ (արձ. թիվ 1) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 87.86 հա վարելահողը և 806.53 հա արոտը օգտագործման տրամադրելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

7) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փաստեր չեն արձանագրվել: